

# ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ      СООБЩЕНИЯ

## ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱՐԲԱՌԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ ՀՆԶՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ռ. Ա. ՄԱՐԿՈՍՅԱՆ

Արարատյան բարբառը ամենից ավելի լայն տարածք և մեծ հանրություն ընդգրկող բարբառներից է: Աբովյանի, Աշտարակի, էջմիածնի, Հոկտեմբերյանի, Հրազդանի, Սևանի, Կամոյի, Սպիտակի, Նաիրիի, Արարատի, Եղեգնաձորի, Ազիզբեկովի շրջանների մեծ թվով գյուղերում ներկայումս խոսում են Արարատյան բարբառով: Այն առավել մեծ տարածում ունի Լոռու շրջաններում՝ Գուգարքում, Ստեփանավանում, Թումանյանում, մասամբ՝ Նոյեմբերյանում:

Հետպատերազմյան տարիներին Իրանի խորքերից Հայաստան գաղթած մեծ թվով հայեր, որոնք հաստատվեցին Արարատի շրջանի Նոր Կյանք, Հոկտեմբերյանի շրջանի Արևիկ, էջմիածնի շրջանի Մուսալեռ և այլ գյուղերում, նույնպես խոսում են Արարատյան բարբառով:

Իր լայն տարածման հետ մեկտեղ, Արարատյան բարբառը, միաժամանակ, մեր ամենից ավելի կենսունակ բարբառներից մեկն է: Միայն Երևանի խոսվածքը, որը նույնպես պատկանում է այդ բարբառին, գրական լեզվի ուժեղ ազդեցությամբ գրեթե դադարել է գործածությունից: Նույնիսկ Երևանի արվարձաններում՝ Նորքում, Առինջում, Քանաքեռում և Զրվեժում, գտնում ենք մաքուր արտահայտված Արարատյան բարբառի խոսվածքներ:

Բարբառի կայունության մասին է վկայում նաև այն փաստը, որ գտնվելով բաղձաթիվ տարբեր բարբառների միջև, երկարատև ժամանակաշրջանում հիմնականում ազդեցություններ չի կրել: Միայն Լոռու խոսվածքներում կան որոշ տարրեր Ղարաբաղի ու Թբիլիսիի բարբառներից, իսկ Կամոյի ենթաբարբառում՝ Մշո բարբառից: Ավելի կատարյալ հնչյունական համակարգ ունենալու և ամբողջ հայ հանրությանը ավելի հասկանալի լինելու շնորհիվ էր, որ Արարատյան բարբառը մեծ դեր խաղաց աշխարհաբար գրական լեզվի կազմավորման գործում:

Արարատյան բարբառը ում ճյուղին պատկանող քառաստիճան բաղաձայնական համակարգ ունեցող բարբառ է, որն առաջացել է խոր անցյալում, ընդհանուր հայերենից ճյուղավորվելու ճանապարհով:

Ինչպես ամեն մի բարբառի, այնպես էլ Արարատյան բարբառի գիտական ուսումնասիրությունն ունի լեզվաբանական և պատմական որոշակի նշանակություն: Լինելով ընդհանուր լեզվի հնագույն և հիմնական տարբերակներից մեկը՝ Արարատյան բարբառն ունի իր հնչյունական, քերականական և բառային ֆոնդի կայուն ու հարուստ համակարգը, որն առավել կարե-

վորությունն է ներկայացնում լեզվի ուսումնասիրության համար: Սակայն այդ բարբառի վերաբերյալ ասպարեզի վրա դեռևս չկա մի ամբողջական և հանգամանալից ուսումնասիրություն:

Արարատյան բարբառի գիտական բնությամբ առաջին անգամ զբաղվել է Հրաչյա Աճառյանը: 1911 թ. լույս տեսած «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ նա, բազմաթիվ բարբառների թվում, տվել է նաև Արարատյան բարբառի փոսական բնութագրությունը: Հետագայում Արարատ Ղարիբյանը, իր «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ դասագրքի հնարավորության սահմաններում համառոտ նկարագրել է բարբառիս հնչյունաբանությունն ու ձևաբանությունը, զետեղել մի քանի նմուշներ:

Արարատյան բարբառի Աբովյանի շրջանի տասից ավելի խոսվածքների ուսումնասիրության ընթացքում անհրաժեշտություն զգացվեց մոտիկից ծանոթանալ նաև բարբառի այլ խոսվածքների Աշտարակի, Էջմիածնի, Հոկտեմբերյանի և այլ շրջաններում, պարզել ընդհանուր օրինաչափություններ:

Հետազոտությունը ցույց տվեց, որ Աբովյանի շրջանի խոսվածքների հնչյունական համակարգն ունի ներքին տարբերակումներ: Ակունքի, Կոտայքի, Գառնո, Գեղաշենի (նախկին Հրազդան), Էլարի (Աբովյան), Զառի խոսվածքներն ունեն քառաստիճան բաղաձայնական համակարգ: Այդ խոսվածքները գրաբարյան բ, գ, դ ձայնեղ պայթականները և ձ, ջ պայթաշփականները բառակազմում վերածել են շնչեղ ձայնեղների՝ բ', գ', դ', ձ', ջ': Իսկ Քանաքեռի, Առինջի, Զրվեժի, Նորքի և Կաթնաղբյուրի խոսվածքներն ունեն երկաստիճան ձայնեղազուրկ բաղաձայնական համակարգ: Դրանք գրաբարյան նույն ձայնեղ պայթականներն ու պայթաշփականները բառակազմում դարձել են խուլեր՝ պ, կ, տ, ծ, ճ<sup>1</sup>:

Կաթնաղբյուր գյուղի խոսվածքն ուսումնասիրելիս պարզվեց, որ այն կրում է ինչպես Արարատյան բարբառին (ու՛մ ճյուղ), այնպես էլ հոյի բարբառին (լ ճյուղ) բնորոշ հատկանիշներ: Հետևապես, Կաթնաղբյուրի խոսվածքը կարելի է կոչել միջճյուղային խոսվածք: Լինելով երկու մեծ գյուղերի՝ Արարատյան բարբառին պատկանող Ակունքի և հոյի բարբառին պատկանող Արամուտի հարևանը՝ Կաթնաղբյուրը անվճար պահպանել է երկու բարբառների հատկանիշները: Այսպես՝ գրաբարյան ձայնեղ բաղաձայնները հոյի բարբառի նման բառակազմում վերածել է խուլերի. ինչպես՝ ձի > ծի, ջուր > ճուր, դարի > կյարի, գնաց > կրնաց, իսկ բառամիջի խուլ պայթականները և խուլ պայթաշփականները Արարատյան բարբառի նման դարձրել է ձայնեղ՝ տետրակ > տէդրակ, մատիտ > մադիթ, տնկել > տրնգել, ապրուստ > աքրուստ, քրտինք > քրոդինք: Բացառական հոլովը կաղմում է ու՛մ և լ ճյուղերի բարբառների նմանությամբ, ինչպես՝ կ'եղից-լ'եղեն, տրնից-տրնեն: Բայի սահմանական եղանակի ներկայի և անցյալ անկատարի կաղմության մեջ գերիշխում է ու՛մ ճյուղը: Հետաքրքրություն է ներկայացնում

<sup>1</sup> խոսվածքների անունները անընդհատ չկրկնելու նպատակով այսուհետև Ակունքի, Կոտայքի, Գառնո, Գեղաշենի, Զառի, Էլարի խոսվածքները և Կաթնաղբյուրի միջճյուղային խոսվածքը պայմանականորեն կանվանենք առաջին խմբի խոսվածքներ, իսկ Քանաքեռին, Առինջին, Զրվեժին, Նորքին՝ երկրորդ խմբի խոսվածքներ: Կաթնաղբյուրի խոսվածքը մյուս բոլոր հատկանիշներով նման է առաջին խմբի խոսվածքներին, ուստի կնշվի այդ խմբի հետ:

իկ'ալըմ անկատար դերբայը, որը միաժամանակ կազմված է լ և ում ճյուղերի դերբայական վերջավորություններով:

**Ձայնավորներ.** Քննարկվող խոսվածքները ա, է, ի, ր, օ, ու ձայնավորներից բացի ունեն վերին բարձրության ան (բացառությամբ Քանաքեռի): Առաջին խմբի խոսվածքները Աշտարակի, Լոռու խոսվածքների և Կամոյի ենթաբարբառի նման ունեն երկբարբառային արտասանության ե (մոտավորապես իէ) և ո (մոտավորապես ուէ) ձայնավորները. ձմեռն > ձ'ըմեռ, բեր > բ'եր, հերկ > հերգ, փող > փող, գող > գ'ող, ոտն > վոտ, հող > խող: Այս խոսվածքները չունեն երկբարբառներ:

**Բաղաձայններ.** Ակունքի, Կոտայքի, Գառնո, էլարի, Գեղաշենի, Զառի խոսվածքները ժամանակակից գրական լեզվի բոլոր բաղաձայններից բացի, ունեն բ', գ', դ', ձ', ջ' շնչեղ ձայնեղ և գ', է', ք' քմայնացած հնչյունները: Առինջի, Զրվեժի, Կաթնաղբյուրի խոսվածքներն ունեն միայն կ', ք' քմայնացած պայթականները, իսկ Քանաքեռի և Նորքի խոսվածքները չունեն նշված հնչյուններից և ոչ մեկը:

Այսպիսով, առաջին խմբի խոսվածքներն ունեն 9 ձայնավոր և 39 բաղաձայն (բացի Կաթնաղբյուրից), Առինջի, Զրվեժի, Կաթնաղբյուրի խոսվածքները նույնպես ունեն 9 ձայնավոր և 33 բաղաձայն, իսկ Քանաքեռի և Նորքի խոսվածքներում կան 8 ձայնավոր և 31 բաղաձայն:

**Շեշտ.** Առաջին խմբի խոսվածքներում շեշտը գտնվում է վերջին վանկի ձայնավորի վրա. Օրինակներ՝ բորբոքել > բ'օրբ'ընք'էլ, մորմոքել > մ'օրմ'ընք'ալ, ծիծաղել > ծըծըղալ, ժողովել > ժօղվէլ, արինլուայ > արընլըվալ, բունկալ > բընկալ, գլխիվայր > գ'ըլխըվէր, սովորեցուցանել > սօվըրըցընէլ, բարովթուն > բ'արըթո'ւն: Իսկ երկրորդ խմբի խոսվածքներում, ինչպես և ընդհանրապես Արարատյան բարբառում, շեշտը կրում են վերջընթեր վանկի ձայնավորները. ծիծաղել > ծիծա'ղալ, ոլորել > ճըլօ'րէլ, կապել > կա'բէլ, գլխիվայր > գլըխի'վէր, թուլացուցանել > թուլա'ցնէլ, արինլուայ > արո'նլըվա, լավութիւն > լավութ'ուն, աղքատութիւն > ախկա'տթուն, ողողել > օղօ'ղէլ:

**Ձայնավորների հնչյունափոխությունը.** Գրաբարյան ա ձայնավորը բոլոր խոսվածքներում միավանկ բառերի և՛ սկզբում, և՛ բառամիջում մնում է անփոփոխ. ինչպես՝ անդ > հանդ, արք > առք, արջ > առչ, աչք > աչկ, թագ > թաք: Միայն ճագ բառում ա-ն վերածվել է է-ի՝ ծէք:

Երկվանկ բառերի սկզբում շեշտակիր ա-ն դարձյալ չի հնչյունափոխվում, ասեղն > ասեղ, ապրել > աբրել, աղեղն > անէղ, ականջ > հանգաճ (վերջին երկուսը՝ դրափոխությամբ): Բացառություն են կազմում միայն արմունկ > էրմունգ (դրափոխությամբ), արժան > էժան բառերը, որոնց մեջ ա-ն փոխվել է է-ի:

Երկվանկանի բառերի միջում նույնպես ա ձայնավորը մնում է անփոփոխ: Կան որոշ բացառություններ, երբ ա-ն շեշտից զրկվելով՝ վերածվում է ը-ի: Այդ բառերն են մախաթ > մըխաթ, սալոր > շըլօր, համար > հըմար > խըմար, սալա > սըլա, ճառա > ջըռա, խանձել > խընձել, վահան > վըման: Մի քանի բառերում էլ փոխվել է է-ի: Դրանք են՝ առաջ > հառէչ, բարեալ > բ'արէվ, միջնակ > միջնէկ, խաչիկ > խէչիկ, երախ > ըռէխ > երռէխ:

Բառամիջում ա ձայնավորը չի հնչյունափոխվել գրական և կրոնական փոխառյալ բառերում. ինչպես՝ ազգական>ասկական, ատաղակ>ավազակ, հրաման>հրամանք, վարդապետ>վառքապետ, աստուածածին>աստվածածին, աշակերտ>աշագետ>հաշագետք<sup>2</sup>:

Իսկական բարդություններում հիմնականում չի հնչյունափոխվել նաև ա հոդակապը: Օրինակ՝ արինաթաթախ>առնաթաթախ, ձինախառն>ձրնախառն>ծրնախառն, կեղտաջուր>կ'շխտաջուր, բերատեղ>բ'շրտեղ>պե-րտեղ, հայրահոտ>խէրախոտ>հէրառոտ և այլն:

Բազմավանկ բառերի սկզբում ա ձայնավորը չի հնչյունափոխվել: Բացառություն են կազմում՝ անկանիլ>ընգնել>հընգընել, անցնել>հընցընել, ամենայն>հըմմէն (Գառնիում՝ զըմմէն), արարմունք>էրէրմունք, աւելի>հեվելի, աւելորդ>հեվելնոր>էվելնոր բառերը:

Բառամիջում շեշտից առաջ եղած ա-ն առաջին խմբի խոսվածքներում կրել է տարբեր փոփոխություններ: Երբ ընկել է երկու բաղաձայնների միջև, սղվել է, իսկ մի քանի բաղաձայնների կուտակման դեպքում հնչյունափոխվել է ք-ի: Օրինակներ՝ թաթախել>թաթխել, բաժանել>բ'աժնել, լալական>լական, բուսանիլ>բ'ուսնել, սարսափիլ>սըսափալ, ժանգառոտ>ժանգըռոտ, կարկատել>կարկըտնել, կոտորատել>կոդըտնել:

Անալ վերջավորություն ունեցող բայերի միջին ա ձայնավորը առաջին խմբի խոսվածքներում, փոքր բացառությամբ, նույնպես հնչյունափոխվել է ք-ի, իսկ հիմնականում սղվել է: Ահա մի քանի օրինակ. թուլանալ>թուլնալ, տաքանալ>տաքնալ, գողանալ>գ'ողնալ, լայնանալ>լէննալ, տեանալ>տէլնալ, ջահելանալ>ջալէլնալ, բայց նաև՝ աղքատանալ>ալքըտնալ, բարձրանալ>բ'անցըրնալ>պանցըրնալ:

Կրկնավոր բառերի միջին ա ձայնավորը առաջին խմբի խոսվածքներում, առանց բացառության, վերածվում է ք-ի կամ սղվում է: Կակազել>կակըզել, կաղկանձել>կոխկընձալ, ծակծակել>ծակծըկել, կարկատել>կարկըտնել, դադարել>դաքըլ, փաթաթել>փաթըլ: Իսկ երկրորդ խմբի խոսվածքներում միջին ա-ն մնում է անփոփոխ:

Առաջին խմբի խոսվածքներում ա ձայնավորը մեծ թվով բառերում դառնում է քմայնացած ն: Դա ամենից հաճախ տեղի է ունենում գրաբարյան բ, գ, դ, ձ, ջ ձայնեղներից առաջացած բ', գ', դ', ձ', ջ' շնչեղ ձայնեղներից հետո: Այս, ինչպես և մյուս դեպքերում, ձայնավորների ներդաշնակության օրենքով, ն է դառնում նաև բառի մեջ եղած հաջորդ ա ձայնավորը: Բերենք մի քանի օրինակ՝ բարդի>ընողի, բարակ>բ'արակ, գաղար>գ'աղար, դաղար>դ'աղար, դատարկ>դ'անդակ, ձաւար>ձավար, ջարդել>ջ'աղթել: Իսկ Կաթնաղբյուրի միջնուղային խոսվածքում, աճառյանական հայտնի օրենքի համաձայն, ա հնչյունը քմայնանում է սլ, կ, ա պայթականներից և ծ, ճ պայթադականներից հետո, որոնք խուլերի են վերածվել գրաբարյան բ, գ, դ, ձ, ջ ձայնեղներից: Ահա մի քանի օրինակ՝ բաժին>պլննին, բարեկամ>պլննէկամ, ձաւար>ձավար, գարի>կ'արի, բարակ>պարակ, դաղձ>

<sup>2</sup> Աշակերտ բառը, երբ գիտակցվում է որպես դպրոցական, չի հնչյունափոխվում, իսկ երբ օգտագործվում է արհեստավորի աշակերտ իմաստով, ա-ն սղվում է. աշագետք, բայց՝ աշգետր:

տնիսց, վարդ > վնար: Իսկ առաջին խմբի խոսվածքներում պ, կ, ա, ծ, և խուլերից հետո ա ձայնավորը երբեք չի դառնում ան:

Ա > ան հնչյունափոխությունը տեղի է ունենում նաև քմայնացած գ', կ', ք', պայթականներից, երբեմն՝ լ, գ, ժ, հ, վ շփականներից հետո:

Գրաբարյան և ձայնավորը Արարատյան բարբառի բոլոր խոսվածքներում կրում է բազմազան փոփոխություններ: Ե՛վ միավանկ, և՛ երկվանկ ու բազմավանկ բառերի սկզբում հիմնականում դառնում է յէ. եզն > յեզ, ել > յել, երկիւղ > յերզուլ, երկինք > յերգինք, երեսուն > յեսուն, եռալ > յեռալ: Բացառություն են կազմում՝ եղբայր > ախալէր և եղիճ > աղինջ փոփոխությունները, որոնք ոչ թե հնչյունափոխության արդյունք են, այլ, ինչպես ցույց է տվել ակադեմիկոս Հր. Աճառյանը, առաջացել են հին հայերենի աղբար և աղինճ բառերի երկրորդ ձևերից:

Երկվանկանի և բազմավանկ բառերի սկզբում և ձայնավորը և ձայնորդից առաջ վերածվում է է-ի. երակ > էրակ, երինջ > էրինջ, երազ > էրազ, երկու > էրկու, երկիւ > էրէվալ և այլն: Բացառություն է կազմում շորս բառը երկու բառում տարնամանությամբ ե-ն դարձել է ի՝ իրեզուն, ապա ձայնավորների ներդաշնակությամբ՝ իրիզուն: Այնուհետև առաջին խմբի խոսվածքներում միջին ի-ն սղվել է և հ-ի հափելումով դարձել հիրզուն: Դարձյալ տարնամանությամբ՝ երեքշաբթի > իրեքշաբթի, երես > հիրես, իսկ երիցակին բառը առնամանությամբ դարձել է իրիսկին:

Բառամիջում և ձայնավորը հիմնականում ղ և ո բաղաձայններից առաջ և շեշտի տակ մնում է ե, որն ունի երկբարբառային արտասանություն: Ահա մի քանի օրինակ՝ բեր > բ'եր, բերդ > բ'եռք, քեռի > ք'եռի, մեռանիլ > մեռնէլ: Երկրորդ խմբի խոսվածքներում՝ ձմեռն > ծըմեռ, դեղին > տեղին, գետին > կ'ետին: Իսկ բազմաթիվ բառերում էլ և ձայնորդից առաջ ե-ն դառնում է է. բարեկամ > բարէկամ, խելօք > խէլօք, ցերեկ > ցէրէկ: Օտար փոխառյալ բառերում ե-ն, առանց բացառության, փոխվում է է-ի. փէշք'էշ, մէշդան, ք'էշա, բէք'արա (անպետք, անպիտան), յէմիշ և այլն:

Ավելի քան երկու տասնյակ բառերում անշեշտ և ձայնավորը հնչյունափոխվելով դարձել է ի. աւերել > ավիրէլ, բարեկենդան > բարիկ'էնքան, սկեսուր > կիսուր, կերակուր > կիրակուլ, փետուր > փիդուտ:

Երկվանկ և բազմավանկ բառերի երկրորդ վանկի և ձայնավորը, երբ բնկնում է երկու բաղաձայնների միջև, սղվում է, իսկ մի քանի բաղաձայնների միջև վերածվում է ք-ի: Օրինակ՝ աւելել > ավլել, հայելի > հալլի, երեսուն > յեսուն, ծարաւենալ > ծարվընալ, յաւելանալ > հէվընալ, իջեցուցանել > հիչըցընէլ և այլն:

Ե ձայնավորը կարող է սղվել կամ վերածվել ր-ի նաև առաջին վանկերում, ինչպես՝ վերադիր > վրադիր, վերակացու > վրակացու, ճեղքել > ճըղէլ, սեղմել > սըլմէլ, լիխել > րխէլ, լեշի > րէլիշ, դեպի > դըքա և այլն:

Գրական և կրոնական, ինչպես նաև բարդ և ածանցավոր բառերը շեն են թարկվում վերը նշված ընդհանուր կանոնին:

Մեր բոլոր խոսվածքներում հազվադեպ են պատահում է-ով սկսվող բառեր: Իսկ միավանկ, երկվանկ ու բազմավանկ բառերի միջում և վերջում զրաբարյան է ձայնավորը մնում է անփոփոխ:

Բացառություն են կազմում մի քանի բառեր, որոնք կրել են տարբեր փոփոխություններ: Ահա դրանք՝ խեժ>խիժ, նարգէս>նարգիզ. կիրակէ>կիրակի, հէնել>խիւնէլ, դէսլի>դրբա. կոէզ>կրոօն (ծառի խեժ):

Է օժանդակ բայը, առանց բացառության, դառնում է ա. խօսըմ ա, բ'երըմ ա, գանըմ ա, վազնըմ ա:

Գրաբարյան ը ձայնավորով սկսվող միայն մի քանի բառ կա մեր խոսվածքներում. ընկեր>ընգ'եր (հրնգ'եր), ընտրել>ընդրել (հրնդրել), հրնդրուշկ (ընտրանի), ընտանի>ընդանիֆ (հրնդանիֆ), կրոնական նշանակություն մը՝ ընծա>ընծա, բարդության մեջ՝ նորընծա, ընդառաջ բառում ը-ն պահպանվել է բարդության մեջ՝ տեառնընդառաջ, որից բարբառում՝ տէրըն-վէս>տըրընդէզ:

Բառամիջում առաջին խմբի խոսվածքներում ը ձայնավորը ունի լայն կիրառություն: Ամեն դեպքում գրվում է բաղաձայնների կուտակման ժամանակ: Կտիտ>կըտըտու, սպրդել>սըփըլալ, խշխշալ>խըշխըշալ, թշթշալ>թըշթըշալ:

Մեր խոսվածքները ը են ավելացնում նաև բաղմամբիվ երկվանկ բառերի մեջ և դրանք դարձնում եռավանկ. խնդրել>խընթըրել, պատծել>պատընել, կապտիլ>կապըտել, հայտնել>հալդընել:

Բոլոր խոսվածքներում, հնչյունափոխության ընդհանուր օրենքի համաձայն, ի և ու ձայնավորները բառամիջում դառնում են ը. սիրտ>սըրդուտ, միտք>մըտքամօլօր, ջուր>ջըրաման, շուն>շընավարի:

Ինչպես հայտնի է, գրաբարում բառավերջում ը չի եղել: Այնինչ մեր խոսվածքները բաղաձայնով վերջացող բոլոր բառերին ավելացնում են ը-ինչպես՝ շունը, տունը, սունը, մոտը, ճ'ինը, բ'ախտը, գ'յէլը, որոնք բառամիջի ը-ի համեմատ ունեն ավելի ուժգին արտաբերություն: Խոսվածքներում ը է դառնում նաև գրաբարյան ն հոդը. տասն>տասը, ձուկն>ձուկը, սերմն>սերմը:

Բառասկզբում ի ձայնավորը մնում է անփոփոխ: Բացառություն են՝ ինձ>ընձի, յիշոց>ուշունց բառերը: Բառամիջում թե՛ գրաբարյան, թե՛ գրական ու կրոնական, թե՛ բարդ ու ածանցավոր և թե՛ փոխառյալ բառերում ի-ն հիմնականում փոփոխության չի ենթարկվել: Դիտված մի քանի հարյուր բառերից միայն մի քանիսում դարձել է է կամ ե: Այդ բառերն են՝ ծիր>ծէր, գիժ>գ'էժ, պճիղ>պընէղ, ապրիլ>աբրէլ (ամիսը), սամիթ>սամէթ, ջիղ>ճէղ, կշիռք>քըշէոֆ, ծիրտ>ծեռա, ցիխ>ցեխ:

Բառամիջում անշեշտ ի ձայնավորը բաղաձայններից առաջ առաջին խմբի խոսվածքներում հնչյունափոխվել է ը-ի. գիշեր>քըշեր, ծիծաղել>ծըծըղալ, շիճուկ>շըտուկ, ճիպոտ>ճըբոտ:

Բառավերջում միայն երկու բառերում ի-ն նույնպես դառնում է է. մի>մէ, երանի>էրնէկ:

Ո ձայնավորը միավանկ բառերի տեղում, որպես կանոն, դառնում է վո. ոխ>վոխ, որդն>վոռթ, ոստ>վոստըղ, որս>վոռս, ործ>վոռցըկալ, որթ>վոռթիկ (հորթ): Բացառություն են կազմում միայն ով>օվ, ող>օղ բառերը: Երկվանկ բառերի սկզբում ո ձայնավորը փոխվում է օ-ի. ոլոր>օլօր, ոռնալ>օռնալ, ոշխար>օշխար>օխշար, ոսկր>օսկօռ: Բացառություն են

կազմում միայն մի քանի բառեր, որոնց սկզբի ո-ն դարձյալ դառնում է վո: Դրանք են՝ որդի > վոռթի, ոսկի > վոսկի, ողնի > վողնիկ, ոչինչ > վոնչինչ:

Բազմավանկ բառերի սկզբում ո > օ հնչյունափոխության մեջ բացառություն չկա. ողողել > օղողել > օղղղել, ոլորել > օլօրել > օլլլրել, որոճալ > օրօ-ճալ: Բացառություն չի կարելի համարել վոռփրվերի, վոսկերիչ, վոխակալ, վոռթնոտել բառերը, որոնց առաջին բաղադրիչը սլահականում է օրենքը:

Բազմավանկ բառերի մեջ առաջին անշեշտ ո ձայնավորը փոխվում է օ-ի, իսկ հաջորդ անշեշտ ո-ն կամ սղվում է, կամ վերածվում ք-ի: Օրինակ՝ ժողովել > ժօղվել, սովորիլ > սօվորել, կոտորել > կօղորել, պողովատ > պօխպաթ, կոտորատել > կօղրոտել, բորբոսիլ > բօրբօսնել, բորբոքել > բօրբօքնել:

Բառի վերջին վանկի շեշտակիր ո-ն միշտ մնում է անփոփոխ՝ ունենալով երկբարբառային (ուէ) հնչում: Խոտ > խոտ, լոր > լոր, հող > խող, գող > գող, այսինքն՝ խուէտ, լուէր, խուէղ, գուէզ: Իսկ երբ բառավերջի շեշտված ո-ն նախորդում է վ կ ղ բաղաձայններին, նորից դառնում է օ, ինչպես՝ ծով > ծօվ, կողով > կօղօվ, խոռվ > խրոօվ, փով > փօվ:

Գրական և կրոնական փոխառություններում բառամիջի անշեշտ ո-ն նույնպես մնում է նույնության մեջ. խոնարհ > խօնար, խորան > խորան, ողորմութիւն > օղորմթուն, հոգի > խոջի, փորձել > փոռցել և այլն:

Մի քանի բառերում ո-ն անկանոն փոփոխությամբ վերածվել է ու-ի: Այդ բառերն են՝ մորեխ > մուռեխ, թոնիր > թունդիր, որոր > ուրուր, ծոպ > ծուփք, յոնք > ունք > հունք, բողբոջ > բրխպուճ, Յովսեփ > Հուսէփ, Թովմաս > Թումաս, Մովսես > Մուսէս:

Ո > ա. — շնորհաւոր > շընախավոր (հաջորդ ա-ի առնամանությամբ), եպիսկոպոս > յեպիսկպոս (հաջորդ ո-ի տարնամանությամբ):

Օ > ու. — մօրու > մուրու (ու-ի առնամանությամբ):

Ու ձայնավորը բոլոր տեսակի բառերի սկզբում պահպանվում է անփոփոխ: Միայն մի քանի բառերում ղ և խ բաղաձայններից առաջ դարձել է ր: Եղած օրինակներն են՝ ուղղորդ > հրղորդ > (ըղորդ), ուղարկել > հրրբխկել > (ըրբխկել, ըղրբգել), ուխտավոր > հրխտավոր (ըխտավոր), ուղեղ > հրղեղ (ըղեղ):

Բառամիջում շեշտված ու ձայնավորը, ի տարբերություն շատ բարբառների, դարձյալ փոփոխություն չի կրել. ինչպես՝ խուրճն > խուոց, կրուկն > կրուոնգ, մուկն > մուկ, կոունկ > կրուոնգ, կարկուտ > կարգուդ, կամուրջ > կարմունջ և այլն: Այս ընդհանուր կանոնից դուրս կան որոշ շեղումներ, որտեղ շեշտակիր ու-ն անկանոն կերպով դարձել է օ: Այդ բառերն են՝ գլուխ > գրլօխ (կրլօխ), բուկ > բօգ (պօկ), բղուկ > բրղօղ (պրղօղ), ծարուխ > շարօխ:

Բազմավանկ բառերի միջին ու ձայնավորը, բացառությամբ գրական և կրոնական բառերի, կամ սղվում է, կամ վերածվում ք-ի, ինչպես՝ տանուտեր > տանտէր, սուրբխաշ > սրփխաշ, ելումուտ > յելփմուտփ, ջարդոսիշուր > ջաոթրփշուր:

Բառավերջում ու-ն, առանց բացառության, հնչյունափոխության չի ենթարկվել:

Երկբարբառների և եռբարբառների կրած փոփոխությունները. Հին հայերենի բոլոր երկբարբառները Արարատյան բարբառում ենթարկվել են հնչյունափոխության: Այ երկբարբառը բառասկզբում և բառամիջում դարձել

է է: Օրինակ՝ այս>էս, այն>էն, այծ>էծ, այլ օր>էլօր, եղբայր>ախպէր, խայթել>խէթել, գալլ>գ'ել>կ'ել: Բառասկզբում բացառություն են կազմում միայն երեք բառ. այստեղ>ըստե, այդտեղ>ըտե, այնտեղ>ընդե:

Բառավերջում կորչում է երկբարբառի յ կիսաձայնը, ինչպես՝ ծառայ>ծառա, տղայ>տըղա, ի վերայ>վրա, փարտայ>փառղա և այլն:

Գրական լեզվից փոխառյալ բառերում ալ երկբարբառը պահպանվում է անփոփոխ. հայրիկ>հայրիգ, մայրիկ>մայրիգ, հայելի>հայլի:

Ալ երկբարբառը բառասկզբում և բառամիջում բաղաձայնից առաջ, ինչպես և ժամանակակից գրական լեզվում, հնչյունափոխվել է օ-ի և պահպանել հստակաձայն օ հնչումը: Օրինակներ՝ աւղ>օթ, աւձ>օց, աւր>օր, ամաւթ>ամօթ, կարաւտ>կաւրտ, խաւաք>խօւք և այլն:

Եւ երկբարբառը խոսվածքներում վերածվել է է-ի. լեառն>լէռ, կորեակ>կօրէկ, վառեակ>վառէկ, ցորեան>ցօրէն, սարեակ>սարէկ:

Գրաբարյան անցյալ դերբայի եւլ վերջավորությունը բարբառի առաջին խմբի խոսվածքներում դարձել է էր. ինչպես՝ գրեալ>գրէր, տեսեալ>տէսէր, ծնեալ>ծընէր, գործեալ>գործէր, իսկ երկրորդ խմբի խոսվածքներում՝ էլ. բերեալ>պէրէլ, կարդացեալ>կառթացէլ, լսեալ>լրսէլ և այլն:

Բաղճյուսական բարդություններում այդ երկբարբառը փոխարինվում է ու-ով, իսկ վերջինս էլ դառնում է ր: Ահա մի քանի օրինակ՝ առետուր>առուտուր, հայրեմայր>հայրումայր>խէրըմէր (հէրըմեր), մարգկին>մարդուկին>մառթըկընիկ, ելեմուտ>ելումուտ>յելքըմուտք:

Իւ երկբարբառը բառասկզբում գոյություն ունի միայն երեք բառում. երկու բառում դարձել է ի, իսկ մեկում՝ ե. իւր>հիրա, իւրեան>հիրան, իւղ>յեղ: Բառամիջում թե՛ շեշտակիր և թե՛ անշեշտ վանկերում բարբառի մեծ թվով խոսվածքներում վերածվել է ու-ի, իսկ Քանաքեռի, Առինջի, Ջրվեժի, ինչպես և Աշտարակի, Նոռու խոսվածքներում՝ նաև ի-ի: Աղբիւր>հախալուր (ախալուր), հարիւր>հարուր>հարիւր, ալիւր>ալուր>ալիւր, արին>արուն>արին, կիւրակէ>կիւրակի, երկիւղ>յեւգուղ և այլն:

Շեշտակիր ոչ երկբարբառը փոխվել է ու-ի. բոյն>բուն>պուն, բոյս>բուս>պուս, ճկոյթ>ցըկութ, կոյս>կուս (միանձնուհի), ոյժ>ուժ, էրեկոյ>հիրգուն, աստուծոյ>աստծու: Հայրոյր բառից ունենք միայն խաչհամփուր (խաչհամփուր): Սովորաբար օգտագործվում են բարբառին հատուկ պաֆ, պաք'էլ բառերը: Նույն ոչ երկբարբառը Քանաքեռի և Նորքի խոսվածքներում դարձել է ի. լոյս>լիս, թոյլ>թիլ, քոյլ>քիւր, պատրոյս>պալիրիս:

Եւ այ եռաբարբառը բոլոր խոսվածքներում փոխվել է ի-ի, ինչպես՝ երկաթեայ էրկլթի, քարեայ քարի, բրդեայ բրդի, արծաթեայ առծրթի և այլն: Կրեայ բառը ձևափոխվելով՝ դարձել է կօմկիւրիւրա, փսկ քրիստոնեայ բառը՝ քրիստոնա:

Եւ եռաբարբառով բառավերջում կա միայն երեք բառ. երկու բառում դարձել է էվ՝ բարեալ>բ'արէվ (պարէվ), սեալ>սէվ: Բառասկզբում եղած եալթն>յալթն բառը յ-ի անկումով և իս-ի հավելումով դարձել է օխտը:

Բաղաձայններ. Գրաբարյան բ, գ, դ, ձ, ջ ձայնեղները Արարատյան բարբառում ենթարկվել են տարբեր փոփոխությունների: Ակունքի, Կոտայքի, Հառի, Գեղաշենի, Գառնո. էլարի խոսվածքներում, ինչպես և Արարատյան

բարբառին պատկանող՝ Աշտարակի, Էջմիածնի, Հոկտեմբերյանի, Սևանի, Հրազդանի բազմաթիվ գյուղերի, Սուլթանաբաղի, Սպահանի, Արարատի շրջանի Արարատ, Զավախքի Փոկա գյուղերի խոսվածքներում և Կամոյի ենթաբարբառում թե՛ բառասկզբում, թե՛ բարդ ու ածանցավոր բառերի միջում դրանք վերածվել են շնչեղ ձայնեղների՝ բ', գ', դ', ձ', ջ': Օրինակներ՝ բազմել>բ'ազմել, բամբասել>բ'ամբ'ասել, բորբ>բ'որբ'ընք'ել, գութան>գ'ութան, գերանդի>գ'էրնդի, մարդագայլ>մառքագ'լ, դալար>դ'ալար, անդուռ>անդ'ուռ, դողդողալ>դ'ողղ'ողալ, ձուկն>ձ'ուկ, ձիւթ>ձ'ութ, ջաղացք>ջ'աղաց, ջով>ջ'ով, ջախջախել>ջ'ընջ'ըխել:

Այս ընդհանուր օրինաչափությանը ենթարկվել են նաև պարսկերենից և այլ լեզուներից վերցված հնագույն փոխառյալ բառերը. ինչպես՝ բազուկ>բ'ազուկ, բաժակ>բ'աժակ, բամբակ>բ'ամբակ, բախտ>բ'ախտ, դարման>դ'արման, դարբեդար>դ'արբեդ'ար, դեմ>դ'եմ, բրինձ>բ'ըրինձ, դրախտ>դ'րախտ, բերդ>բ'եռթ, ձէթ>ձ'էթ, գուրպա>գ'ուլբա: Մինչդեռ նոր փոխառյալ բառերը (պարսկերենից՝ V դարից, արաբերենից՝ VII, թուրքերենից՝ X դարից հետո) չեն ենթարկվել այդ տեղաշարժին, հետևապես՝ հնչյունափոխական այդ օրինաչափությանը: Բերենք այդ բառերից մի քանիսը. պարսկերենից՝ բոխլա, բոստան, բըլբուլ, գյուլաշ, դաւզան, դուրբին, դոստ, ջանդու, ջաննավար, արաբերենից՝ դունյա, դանվի, դանամ, դաֆտար ջէբ, ջանամ, ջիվան, ջուլ, ջանել, թուրքերենից՝ բալթա, բայկուշ (բու), բարոթ, բայդաղ (դրոշակ), գյուլլա, գանգ, գ'իլազ, դոշակ, ջէյրան, բիրդան, բարեմբար, բոզ (գորշ), դանամ (ուղտ), բալա (երեխա) և այլն:

Կաթնաղբյուրի միջնուղային խոսվածքը, Քանաքեռի, Առինջի, Զրվեժի, Նորքի, ինչպես և Վայոց ձորի մի քանի գյուղերի (Արենի, Ռինդ, Աղավնաձոր, Խաչիկ, Գնիշիկ, Հորս, Գնդեազ, Կեչուտ) խոսվածքները գրաբարյան նույն բ, գ, դ, ձ, ջ ձայնեղները թե՛ բառասկզբում և թե՛ բարդ ու ածանցավոր բառերի միջում, Վանի, Ուրմիայի, Խոյի, Ղարաբաղի և արևելյան մյուս բարբառների նման, վերածել են պ, կ, տ, ծ, ց խուլերի: Բամբասել>պամպասել, բերան>պէրան>պէրնէպէրան, գերան>կ'էրան, գոռալ>կոռալ>կոռկոռալ, դողալ>տողալ, ձոր>ծոր, ձեռագործ>ծէռակործ, ջուր>ճուր, ջախջախել>ճընճըխել:

Հնագույն փոխառյալ բառերը նույնպես ենթարկվել են այս օրենքին. դարման>տարման, բրինձ>պրինձ, դրախտ>տրախտ, բերդ>պէռթ, ձէթ>ծէթ, դաշտ>տաշտ, բժիշկ>պրժիշկ, դմակ>տըմակ: Իսկ նոր փոխառյալ բառերը, ինչպես այդ ցույց տրվեց վերը մյուս խմբի խոսվածքների օրինակով, մնացել են անտեղաշարժ և չեն ենթարկվել բարբառի ընդհանուր օրինաչափության:

Բարբառի բոլոր խոսվածքները գրաբարյան նույն ձայնեղները բառամիջում և բառավերջում, որոշ բացառությամբ, վերածել են խուլերի և շնչեղ խուլերի: Բերենք մի քանի օրինակ՝ աղբիւր>հախպուր, աբեղայ>հափէղա, աղբ>ախպ, ագուգայ>աքուքա (ակընկալ), հոգ>հօքս, երգ>յերք, պատրոյգ>պադրուք, դադարիլ>դաթրէլ, լեարդ>լեռթ, խուրձն>խուռց, որձ>վուռց, օձ>օց, արջառ>աշառ, քուրջ>քուռ, մրջին>մըռճէմ<sup>3</sup>:

<sup>3</sup> Բոլոր խոսվածքներում բառամիջում և բառավերջում եւ ձայնորդից հետո ձ և ջ ձայնեղները, բացառությամբ գրական և կրոնական բառերի, մնում են անփոփոխ, ինչպես՝ 8\*

Այդ ընդհանուր օրինաչափություններից դուրս ք, գ, դ, ձ, ջ ձայնեղները ենթարկվել են մի քանի մասնակի փոփոխությունների: Բալախ և բրդել բառերում ք ձայնեղը դարձել է շնչեղ խուլ՝ փալախ, փրոթէլ: Մի քանի բառերում գ ձայնեղը վերածվել է կ-ի. լոգանալ > լօխկընալ, ազգ > ասկ, շաղգամ > շախկամ, տուգանք > տօկանք, դրգրալ > կրկըրալ: Գեղարդ > Գիղարժ բառում ք-ի առնմանությամբ քմայնացած գ'-ն դարձել է ք'՝ Գ'եղարժ: Որոշ բառերում ն ձայնորդից հետո տեղի է ունեցել դ-ի հավելում. ծանր > ծանդր, մանր > մանդր, ծունր > ծունդր, թոնիր > թունդիր<sup>4</sup>:

Ձգել բառը դարձել է քըցէլ. նախ՝ ըստ օրինաչափության գ-ն փոխվել է ֆ-ի, որի ազդեցությամբ էլ ձ-ն դարձել է զ, ապա տեղի է ունեցել դրափոխություն: Վարձք > վարցք > վարսկ բառում դարձյալ օրենքի համաձայն ձ-ն հնչյունափոխվել է ց-ի, ապա ց՝ հնչյունախումբը վերածվել է խուլի՝ սկ, այսինքն՝ բարդ հնչյունները պարզվել են: Ձ ձայնեղը որոշ բառերում խուլ բաղաձայնից առաջ դարձել է շ կամ ժ. մեջք > մէշկ, առաջք > հառէշկ, իջանել > իշնէլ, միջնակ > միշնէկ, հրնջնակ > էրիժնակ, յօրանջել > օրօժկըտալ: Այստեղ նույնպես բարդ հնչյունները վերածվել են պարզի:

Ետնալեզվային պայթյալանքներ. — Կ, կ, ֆ ետնալեզվային պայթյալանքները, բացի Քանաքեռի և Նորքի խոսվածքներից, է (ե), ի, երբեմն նաև ա (ա) ձայնավորներից առաջ բառասկզբում և բառամիջում քմայնացել են՝ դառնալով գ', կ', ք'. գագար > գ'ազար, Գառնի > Գ'առնի, գիւղ > գ'իւղ, գինի > գ'ինի, կիրակէ > կ'իրակի, կենդանի > կ'էնթանի, կին > կ'ին, քանի > ք'անի, ցամաքի > ցամ'ք'էլ, քենի > ք'էնի:

Աշտարակի խոսվածքում այդ հնչյունների քմայնացումն ալնքան է ուժեղացել, որ դրանք վերածվել են ջ, ն, շ շնչականների. գայլ > ջ'էլ, գյուղ > ջ'էդ, հոգի > ֆոշի, քոյր > շիր, գինի > ջ'ինի, քիշ > շիշ, կեր > ճէր և այլն:

Արարատյան բարբառի թե՛ քննարկվող և թե՛ մյուս խոսվածքներում պ, կ, տ, ծ, ճ խուլերը բառասկզբում մնացել են անփոփոխ, իսկ բառամիջում վերածվել են ք, գ, դ, ձ, ջ ձայնեղների: Բերենք մի քանի օրինակ. ապարուտ > աքրուտ, կուպայ > կուքա, տպրակ > տօքրակ, պատուատ > պադրուտ > պադրիս, ապրանք > աքրանք, մանկունք > մանդունք, երեկոյ > իրիգուն (հիրգուն), մկրատ > մրգրադ, մատուռն > մադուռ, ծիծառն > ծիժննագ, ցածր > ցաժըր, լծել > լրժէլ, ճճի > ճիջու և այլն<sup>5</sup>:

Խուլ պայթյալան ւ-ն ն ձայնորդից առաջ, վերջինիս առնմանությամբ, դարձել է ն. գետնին > գէննին, մատնոց > մաննոց, մատանի > մաննիր, մտանել > մըննել, ոտներ > վոններ:

Խոսվածքներում զգալի փոփոխություններ է կրել գրաբարյան և բաղաձայնը. Ակունքի, Կոտայքի, Գեղաշենի, Գառնո խոսվածքները, Կաթնաղբյուրի միջնադարյան խոսվածքը, Կամոյի ենթաբարբառի, ինչպես նաև Վանի,

սանձրիլ > սընձըրվէլ, գանձ > գանձ, անձրե > անձըրե, բանջար > բ'անջար, երինջ > էրինջ, կամորջ > կարմորջ: Վերջին բառում շնայած ջ-ն գտնվում է ր-ից հետո, բայց քանի որ տեղի է ունեցել դրափոխություն և ն-ի հավելում, ջ-ն մնացել է անփոփոխ:

<sup>4</sup> Եանր > սանդըր բառում տեղի է ունեցել ոչ թե դ-ի հավելում, այլ վերականգնվել է սանդերբ արմատի դ-ն:

<sup>5</sup> Այս օրենքը խոսվածքներում (և առանձնապես Քանաքեռի խոսվածքում) ունի զգալի քաջառուվյուռներ: Օրենքից շեղվում են նաև գրական և կրոնական բառերը:

կոյի, Ուրմիայի, Մարաղայի, Ջուղայի բարբառների նման, այդ հնչյունը վերածել են խ-ի. հաց>խաց, հոտ>խոտ, հալո>խէր, հող>խող, օրհնել>օխնել, պահել>պախէլ, շնորհաւոր>շընախավոր, բահ>բախ և այլն: Առանց բացառութեան հ>խ հնչյունափոխութիւնը տեղի չի ունենում:

1. Երբ հ-ն ավելացել է ձայնավորներից առաջ. ինչպես՝ առաւոտ>հառավոդ, արտ>հառդ, արբել>հառփէլ, աղբիւր>հախսուր:

2. Այն բառերում, որոնք գրաբարում սկսվել են յ-ով և աշխարհաբարում դարձել հ. յարմար>հարմար, յաւետ>հաւիդյան, յիսուն>հիցուն, յուս>հուս, յօրանալ>հօընալ:

3. Գրական փոխառյալ բառերում. հրաման>հըրաման, հնազանդ>հընազանդ, հրաշք>հըրաշկ, հարկաւոր>հարգաւոր:

4. Թուրքերենից և թուրքերենի միջոցով անցած օտար փոխառյալ բառերում. հունար, հազըր, հարամ, հալալ և այլն: Այդ նշանակում է. որ հ>խ հնչյունափոխութիւնը հին է. այն տեղի է ունեցել մինչև X—XI դդ., այսինքն՝ մինչև թուրքական տիրապետութիւնը:

Առաջին խմբի խոսվածքներում, Կամոյի ենթաբարբառի նման, ձայնավորից հետո որոշ բառերում հ-ն դարձել է յ. սահման>սայման, հեռախոս>յեռախօս, ուհան>հըռէյան, տոհմ>տօյմ, հեռու>յեռու, թաղուհի>թաքուի, Ջոհրաբ>Ջօյրաբ, Վահրամ>Վայրամ և այլն:

Երկրորդ խմբի, ինչպես և Սուլթանաբադի, Աշտարակի խոսվածքներում որոշ բառերի սկզբում եղած խ-ի թուլացումից ստացվել է հ. խաղալ>հաղալ, խաղող>հավող, խեղդել>հէխտէլ, խեղճ>հէխջ:

Նույն խոսվածքներում ու ձայնավորից առաջ հ-ն վերածվել է ֆ-ի. օրհնակ>հոգի>ֆոգի, հորթ>ֆոթթ, հող>ֆող, հոտ>ֆոտ, հոն>ֆօն:

Բ ձայնորդը բառամիջում շնչեղ խուլներից, պայթաշփականներից և առաջնակեզվային պայթականներից առաջ փոխվել է ո-ի. ինչպես՝ արծիւ>առծիվ, արջ>առշ, թերթ>թեռթ, որձ>ըռոց, մրափել>մըռփէլ և այլն:

Այսպիսով, քննարկված խոսվածքները արտահայտում են Արարատյան բարբառի հնչյունական կատարյալ համակարգը և կուռ ու կայուն հնչյունական օրինաչափութիւնները:

#### ФОНЕТИЧЕСКАЯ СИСТЕМА ОДНОЙ ГРУППЫ ГОВОРОВ АРАРАТСКОГО ДИАЛЕКТА

Р. А. МАРКОСЯН

(Резюме)

Араратский диалект сформировался еще в глубокой древности и получил наибольшее распространение. В статье кратко излагаются результаты изучения более чем десяти говоров абовянского ареала этого диалекта, в том числе межвидового катнахпюрского говора. Законо-

мерности фонетических изменений говоров показаны на примерах изменения гласных, согласных и дифтонгов. Говоры сел Акунк, Гарни, Зар, Котайк, Гегашен и Элар имеют четырехступенчатую систему согласных, а говоры Канакера, Аринджа, Джрвежа, Норка и межвидовой говор села Катнахпюр—двухступенчатую систему. В первой подгруппе звонкие взрывные и звонкие взрывно-смычные грабара в начале слова превратились в придыхательные звонкие, а во второй подгруппе те же звуки грабара заменились глухими. Ударение в араратском диалекте в основном падает на предпоследний слог слова. В одной из подгрупп согласно общей закономерности, свойственной данному диалекту, ударение падает на предпоследний слог, а в другой подгруппе на последний.